ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 24-Ա

2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՍՈՂԱՆՔՆԵՐԻ, ՎԹԱՐԱՅԻՆ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով,հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2020 թվականի ապրիլի 29-ի N 02/2859-2020 գրությունը՝

Որոշում եմ՝

1. Համայնքի վարչական տարածքում՝ 2020 թվականի ընթացքում հնարավոր գարնանային հեղեղումների, սելավների, սողանքների,վթարային կամուրջների և հնարավոր քարաթափումների տեղամասերում սպասվող հնարավոր վտանգների նվազեցման և հետևանքների վերացման ու անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու, արտակարգ իրավիճակների վնասների նվազեցման և հետևանքների վերացման աշխատանքներն օպերատիվ կազմակերպելու նպատակով ստեղծել համայնքային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Մնացականյան Գառնիկ - համայնքի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ

Փինաչյան Ժենիկ - համայնքի ղեկավարի օգնական, հանձնաժողովի անդամ

Զուռնաչյան Գառնիկ - աշխատակազմի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ

Քարամյան Մելիք - աշխատակազմի առաջատար մասնագետ, հանձնաժողովի անդամ

Ալոյան Հերմինե - համայնքապետարանի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ:

2. Համայնքային հանձնաժողովին՝

1) Կատարել ուսումնասիրություն համայնքի հեղեղավտանգ՝ «Բավեյ ձոր», «Գասպարի ձոր», «Փոթեյ ձոր», սողանքավտանգ՝ «Գերեզմաններ», «Հովսեփի

գոլ», «Դարի գլուխ», «Աղվսբներ», «Բոստան կայա» կոչվող տարածքները՝համապատասխան ցուցումներ տալ սողանքավտանգ տարածքների ազգաբնակչությանը,արձանագրել և ներկայացնել առաջարկ հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելման ու հետևանքների վերացման ուղղությամբ:

2) Հաշվառել և ձեռք բերել պայմանավորվածություն տրանսպորտային միջոցների /էքսկավատորներ, ինքնաթափ բեռնատարներ/ ունեցող սեփականատերերի հետ՝ անհրաժեշտության դեպքում դրանք արտակարգ իրավիճակների ժամանակ օգտագործելու համար:

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2019 թվականի փետրվարի 21-ի N 17-Ա որոշումը:

20.05.2020

X

VERIFIED OCSP 20.05.2020 10:59:07 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ

Подписано: BAVEYAN SASHA 1902730216

2020 թ.մայիսի 8
գ.Երանոս